ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ պատմության և հասարակագիտության ֆակուլտետը 2022 թ. սեպտեմբերի 8-9-ը կազմակերպում է **«Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը պատմության քառուղիներում. Սիսից մինչև Անթիլիաս»** խորագիրը կրող հանրապետական գիտաժողով: Այն իրականացվում է ՀՀ Գիտության պետական կոմիտեի ֆինասավորմամբ՝ 20TTSH-043 ծածկագրով թեմատիկ հետազոտական ծրագրի շրջանակներում:

Գիտաժողովի ուղղություններն են՝ պատմություն, հայ եկեղեցու պատմություն, աստվածաբանություն, գրականություն:

Գիտաժողովում կարդացված զեկուցումները տպագրվելու են առանձին գիտական ժողովածուի տեսքով և պետք է ներկայացվեն հետևյալ չափանիշներով՝

- հոդվածը կարող է լինել հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով,
- հոդվածը պետք է նախկինում տպագրված չլինի,
- հոդվածի վերնագիրը գրել գլխատառերով, վերնագրից հետո՝ հոդվածի հեղինակի անունը, հայրանունը, ազգանունը, բանալի բառերը՝ 5-7 բառ, որից հետո հոդվածի բովանդակությունը,
- հոդվածի ներածական մասում պետք է ներկայացվի հիմնահարցի նորույթը,
- բոլոր ծանոթագրություններն ու հղումները պետք է տրվեն տողատակում,
- հոդվածի վերջում պետք է ներկայացնել ռուսերեն և անգլերեն ամփոփումներ,
- հոդվածը պետք է ունենա A4 (210x297) չափի տպագիր 4-10 էջ ծավալ, վերևից, ներքևից, աջից և ձախից՝ 20 մմ,
- հոդվածի տառատեսակը՝ հայերենը՝ GHEA Grapalat, ռուսերենը և անգլերենը՝ Times New Roman, տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, տողերի հավասարեցումը՝ աջ և ձախ կողմերից՝ առանց տողադարձի,
- յուրաքանչյուր հոդվածի վերջում՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով պետք է ներկայացված լինի հեղինակի/հեղինակների մասին տեղեկույթ (գիտական կոչում, աստիճան, պաշտոն, կազմակերպություն, գիտական հետաքրքրությունների շրջանակ, էլհասցե),
- հոդվածների էլեկտրոնային տարբերակն ուղարկել մինչև 2022 թ. օգոստոսի 22-ը aspuconference@gmail.com էլեկտրոնային հասցեով,
- հեղինակները մինչև 2022 թ. սեպտեմբերի 1-**ը** կիրազեկվեն ներկայացված հոդվածների՝ գիտաժողովի թեմատիկայի համապատասխանության վերաբերյալ,
- լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք գրել կամ զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ +37493193011:

Գիտաժողովի կազմկոմիտե